ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գ դ. կեսերին Հայաստանն ապրում էր քաղաքական բարդ իրավիճակ։ Թեև վերացել էր Հայոց թագավորությունը, երկիրը պահպանում էր ներքին ինքնավարությունը (նախարարությունները, գործակալական կարգը և եկեղեցին), մի հանգամանք, որը հակասում էր Բյուզանդիայի հետ արյունոտ մրցակցության մեջ մտած Սասանյանների «մի թագավորություն, մի հավատ» սկզբունքին։ Հռոմեական կայսրությունը ևս բազմիցս փորձեր էր արել հռոմեականացնելու Հայաստանը, սակայն նրա բոլոր ջանքերն ամուլ էին մնացել։ Հռոմեական կայսրությանը, ինչպես նկատել է Հ. Մարկվարտը, արևելյում հայերը կարողացան դիմակայել և զերծ մնալ ձուլումից[1]։ Տակավին Մաքսիմինոս Դայա կայսեր օրոք (305—313) Հռոմը փորձեց հավատափոխ անել Հռոմեական Հայաստանի հայերին, բայց զինված հակահարված ստացավ նրանցից[2]։

Հեթանոսական շրջանում Հայաստանն ուներ զարգացած քաղաքակրթություն, որը մոտիկ էր պարսից մշակույթին, բայց քրիստոնեությունը հայերին վանեց իրենց վաղեմի հարևաններից, մոտեցնելով արևմուտքին։ Սասանյանները բոլոր ջանքերով կամենում էին Հայաստանում արմատախիլ անել քրիստոնեությունը՝ հայերին իրենց կողմը գրավելու միտումով[3]։ Այս ուղղությամբ Շապուհ Բ-ի (310—379) կատարած քայլերին օժանդակում էին Արծրունիները։ Հայաստանում հազիվ կեսդարյա բովով անցած քրիստոնեությունը չէր կարող ի մի ձուլել Հայաստանի քաղաքական ուժերը։ Այլ էր վիճակը մեկ դար հետո, երբ պետականությունը կորցրած Հայաստանը տիրողներին դիմակայելու այլ միջոց չուներ, բացի նախարարական կարգից, մշակույթից և կրոնից։

450—451 թթ. հայերի մղած ժողովրդա-ազատագրական պատերազմը հօդս ցնդեցրեց Սասանյանների համաձուլարար նկրտումները։ Այդ պատերազմին Մամիկոնյաններից հետո ամենից գործուն մասնակցությունն ունեցան Արծրունիները, ապա Կամսարականները։ Շարժմանը Արծրունիների հարելն ունի իր պատճառները։ Այս տոհմի գործիչները հուսախաբվել էին պարսիկներին համագործակցելուց, ինչին զոհ գնաց նրանց տոհմական արժանապատվությունը։ Մերուժանի հայրենադավ գործելակերպը սև հետք թողեց Արծրունիների հեղինակության վրա։ Մյուս կողմից, Հայաստանում գնալով ավելի խոր արմատներ էր գցում քրիստոնեությունը։ Հայոց պետականության

---

[1] J. Markwart, Die Entstehung. und Wiederherstellung der armenischen Nazion, Berlin, s. 1919, 3.

[2] Եվսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 688—689։ Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 125—126։

[3] Հմմտ. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 87—88։

կորստի պայմաններում Արծրունիները ևս կառչեցին հայրենի ավանդույթներին։ Արծրունիների վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ նրանք խնամիական կապեր ունեին Մամիկոնյանների և Դուդարաց Աշուշա բդեշխի հետ (որը ևս մասնակցեց շարժմանը)։ Բացի այդ, Արծրունիները ժամանակի հայ հոգևորականության մեջ ունեին ականավոր ներկայացուցիչներ (Աղան, Մուշեղ), որոնց վրա կարող էր ազդել նաև դատավարական իշխանությունից զրկված Հովսեփ կաթողիկոսը։ Կարևոր նշանակություն ուներ նաև շարժմանը դեմ դնացող Սյունյաց և Բագրատունյաց տների հետ ունեցած մրցակցությունը։ Հայանի է, որ մարդպանության շրջանում գահնամակում երրորդ տեղը բռնող (Սյունյաց և Բագրատունյաց տոհմերից հետո) Արծրունիներին պարսիկները ոչ մի կարևոր պաշտոն չվստահեցին, մինչդեռ Վասակ Սյունուն շնորհեցին Հայոց մարդպանի պաշտոնը։ Թեև դա զուտ անձնական և ոչ թե տոհմային առանձնաշնորհում էր, բայց խոցում էր Արծրունիներին։ V դ. Արծրունյաց տոհմն ուներ երկու ճյուղ, որոնք միասնաբար էին հանդես գալիս ազատագրական պայքարում։

Մարդպանության պայմաններում Արծրունյաց տոհմը ևս մյուս նախարարությունների պես պահպանեց ներքին լայն իրավունքներ, ինքնուրույնություն։ Պարսից ձուլումը ոչինչ լավ բան չէր խոստանում նրանց։ Ուստի նրանց մոտ ևս Հաղկերտ Բ-ի հավատափոխության մասին արած առաջարկը բացասական արձագանք գտավ։ Արտաշատի ժողովին մասնակցող 18 նախարարների մեջ էր նաև Արծրունյաց նախարարը՝ Ներշապուհ Արծրունին։ Նույն ժողովի մասնակից 18 հոգևորականների մեջ էր նաև Արծրունյաց Մուշեղ եպիսկոպոսը։ Այս ժողովին, Ղազար Փարպեցու վկայությամբ մասնակցում էր նաև Արծրունի հոգևորական Աղանը[4]։ Թե՛ Փարպեցին և թե՛ Եղիշեն նախարարների մեջ երկրորդ տեղում (Վասակ Սյունուց հետո) հիշում են Ներշապուհ Արծրունուն։

Արտաշատի ժողովից հետո երկրում ծավալված իրադարձություններում ևս Արծրունիները գործուն մասնակցություն ունեցան։ Հաղկերտ Բ-ի կողմից Տիրոն կանչված տասը նախարարների մեջ էր նաև Ներշապուհ Արծրունին։ Հայաստան վերադառնալուց հետո Վարդան Մամիկոնյանը, չկարողանալով տանել կեղծ ուրացության բեռը, դիմում է բյուզանդական կողմը։ Վասակը որդեկ մարդպան, պատասխան պիտի տար նրա հեռանալու համար, ուստի նախարարների ու հոգևորականների (այդ թվում և Արծրունիների) գիտությամբ և կամակցությամբ նամակներ ուղարկեց Վարդանին, որն անսալով նախարարների ու հոգևորականության ձայնին, ետ վերադարձավ։ Արծրունիներն անշուշտ մասնակցում էին նաև Վասակից գաղտնի Վարդանի գումարած խորհրդակցությանը, որի նպատակն էր ապստամբության նախապատրաստումը։ Այդ խորհրդակցության որոշումների մասին ի վերջո Վարդանն իրապես է գարձնում նաև Վասակին։ Փարպեցու վկայությամբ, Վասակը համաձայն չէր ապստամբներին և ակամայից միայն միաբանվեց նրանց հետ[5]։ Եղիշեն և Փարպեցին պնդում են, թե ապստամբությանը Վասակը հարեց, որպեսզի դառնա Հայոց թագավոր։ Նույն կարծիքին են որոշ ուսումնասիրող-

---

4 Նույն տեղում, էջ 92։

5 Նույն տեղում, էջ 129։

ներ[6]։ Վասակը թերևս նույնպես համոզված էր, որ Սասանյաններն անարդարացի քաղաքականություն են վարում Հայաստանի նկատմամբ, ուստի անբնական չէ ապստամբներին նրա հարելը։ Բայց նա, ինչպես և նախարարների մեծամասնությունը, համոզված էր, որ հայերը մեն-մենակ ի զորու չեն լինի հակահարված տալու հզոր Պարսկաստանին։ Ուստի նախարարները և Վասակը պատգամավորություն են հղում բյուզանդական կայսեր. Աղձնյաց բդեշխի, Անգեղ տան, Ծոփքի, Հաշտյանքի, Եկեղյաց գավառի իշխանների և Անտիոքի զորապետի մոտ։ Ըստ Փարպեցու, պատգամավորության մեջ են մտել Վահան Ամատունին, Հմայակ Մամիկոնյանը և Արծրունյաց նախարար Մեհրուժանը, իսկ ըստ Եղիշեի՝ միայն Ատոմ Գնունին։ Եղիշեն բերում է նաև նամակի բովանդակությունը։ Հայ նախարարները, դիմելով կայսրությանը, նպատակ ունեին զսպել պարսիկներին, բայց պարսիկներից 439 թ. պարտություն կրած Բյուզանդիան, որին արևմուտքում սպառնում էին հոները, ի վիճակի չէր օգնություն ցույց տալ հայերին։

Դեսպանության կազմի Վասակի կատարած ընտրությունը պատահական չէր։ Հայոց հազարապետությունից Վասակ Սյունեցու հավանությամբ ազատված Վահան Ամատունուն, այլև հայ իշխանների մեջ լայն հեղինակություն վայելող Մեհրուժան Արծրունուն և Հմայակ Մամիկոնյանին Բյուզանդիա ուղարկելը հետամտում էր ոչ միայն նրանց մեկուսացնելու, այլև այդ տոհմերին ապստամբության հաջող ելքի նկատմամբ տարհամոզելու նպատակներ (մանավանդ եթե դեսպանները վերադառնային ձեռնունայն)։ Սրան զուգահեռ Վասակը հայոց զորքը բաժանեց երեք մասի. մի մասը ներշապուհ Արծրունու («Իմբոսնան») գլխավորությամբ ուղարկվեց Ատրպատական՝, մյուսը՝ Վարդանի առաջնորդությամբ մեկնեց Աղվանք, երրորդ զորաբաժինը մնաց Վասակի իրավասության տակ։ Հավանաբար, վերջինիս կանխագիտությամբ էր, որ պարսից զորքն առաջին հերթին արշավեց ոչ թե Հայաստան, այլ Աղվանք, որտեղ պարսիկների դեմ հայոց այրուձիի մարտնչելը նրանց կհուշեր հայերի, վրացիների և աղվանների միասնության մասին, թեև դրանով հայ նախարարները ժամանակ կշահեին, մինչև որ կգտնեին կողմնորոշման ավելի իրատես ուղին։

Դեսպանության ելքի մասին Եղիշեի և Փարպեցու տվյալներն իրարամերժ են։ Ըստ Փարպեցու, պատգամավորները չվերադարձան և չմասնակցեցին Ավարայրի ճակատամարտին, մինչդեռ Եղիշեն գտնում է, որ հայերը տակավին Ավարայրի ճակատամարտից առաջ տեղեկացան պատգամավորության անհաջողության մասին։ Ինչպես նշեցինք, Եղիշեն գրում է, որ հայերը տակավին Ավարայրի ճակատամարտից առաջ տեղեկացան պատգամավորության անհաջողության մասին։ Ինչպես նշեցինք, Եղիշեն գրում է, որ հայերը

---

6 Մ. Փորթուգալ, Եղիշեի վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Վենետիկ, 1903, էջ 55, Բ. Կյուլսերյան, Եղիշե, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 277—280, Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 97 և այլն։

7 Թե՛ Եղիշեն, և թե՛ Փարպեցին ոչինչ չեն հաղորդում հետագայում այս զորաջոկատի խաղացած դերի մասին։ 451 թ. ապրիլին, երբ պարսից զորքը խուժում է Հայաստանի Հեր և Զարեհավան գավառները, նրանց դեմ է ելնում այդ զորաջոկատ. Ամատունյաց տոհմից Առտնձաբ սպարապետը 2000-անոց զորագնդով ուղարկվում է պարսիկների դեմ և ջարդելով ու ցրելով նրանց առաջապահ զորամասը, վերադառնում է հայոց զորքի ճամբարը (Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 105—106)։

հայոց վախճանի մասին։ Այս հարցում Եղիշեն ավելի է արժանահավատ։ Փարպեցու և Եղիշեի հաղորդումներից երևում է, որ պատգամավորությունը, անհաջողության հանդիպելով կայսրության արքունիքում, Բյուզանդական Հայաստանից հավաքում է օժանդակ ուժեր և անցնում Խաղտիքի սահմանագլուխը՝ Պարխար լեռներ և ամրանալով այնտեղ, սպասում դեպքերի զարգացմանը։ Պարսից արքունիքը (հավանաբար Բյուզանդիայի միջոցով) իրազեկ է դառնում այս մասին և զորք է ուղարկում նրանց դեմ։ Պարսից զորքը հարձակվում է Պարխարում ամրացած հայոց գնդի վրա։ Մարտի ժամանակ սպանվում է Համայակ Մամիկոնյանը, որից հայոց զորաջոկատը հուսաբեկվում է[8]։

Այս անցքերը Փարպեցին դնում է Ավարայրի ճակատամարտից հետո։ Սակայն պետք է կարծել, որ դրանք տեղի են ունեցել մինչև Ավարայրի մարտը։ Անբնական կլիներ օգնական ուժ բերելու համար Բյուզանդիա մեկնած պատգամավորության կողմից հայերին վճռական պահին օժանդակելուց խուսափելը և այն էլ Մամիկոնյան, Ամատունի և Արծրունի իշխանների կողմից։ Պարսիկների հետ առաջին ընդհարումից և Համայակի զոհվելուց հետո հայոց այս գունդը Պարխար լեռներից քշաթիվ ուժերով շտապում է Այրարատ և միանալով Վարդանանց, մասնակցում Ավարայրի ճակատամարտին։ Ուստի, ըստ Եղիշեի, Ատոմ Դնունին և Վահան Ամատունին մասնակցում են Ավարայրի մարտին[10]։

Հենց դևսպանության արդյունքների, այլև հայերի հանդեպ պարսից արքունիքի վերակողմնորոշման մասին իրազեկ դառնալու հետևանքով էր, որ Վասակը վճռական դեմ գնաց ապստամբությանը, իրեն հարած նեխարարների, հոգևորականների միջոցով երկրում ծավալելով հակաապստամբական շարժում, որի ընթացքում, ցուցադրելով հայերի հավատափոխության առաջարկը նոր վերցնելու մասին պարսից դռան նոր հրովարտակները, Վասակը հավաստիացնում էր, թե «ես լինիմ միջնորդ այսմ ամենայնի և անվնաս պահեմ զաշխարհս հայոց»[11]։ Բայց Վարդանանք չանսացին Վասակի և նրա հետևորդների հորդորներին և ազդեցիկ մի քանի հոգևորականների քարոզով ուղղի ելան, պարսիկներին դիմագրավելու համար։

Արծրունիները Վարդանանց կողմն էին։ Ուշագրավ է, որ Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու մոտ թե՛ Փարպեցուց և թե՛ Եղիշեից տարբեր ավյալներ կան այս մասին։ Այսպես, ըստ Թովմա Արծրունու, Վարդանանց շարժման նախաձեռնողին Աղան Արծրունու հայրը՝ Շավասպ Արծրունին, Հայաստանին տիրելու ցանկությամբ մեկնում է Պերոզ արքայի մոտ և հանձն է առնում հարելու զրադաշտական կրոնին, միայն թե տիրանա հայոց գահին։ Պարսից արքան, Շավասպին վստահելով հայերի հավատափոխության գործը, Վնդո մոգպետի հետ նրան ուղարկում է Հայաստան, որտեղ Շավասպի հրամանով քանդում են հայոց եկեղեցիները և հիմնում ատրուշաններ։ Երբ Արտաշատում կառուցվում է ատրուշան, հայ նախարարները այդ մասին տեղեկացնում են Մոկքի Զոհրայ ամրոցում ապաստանած Վարդան Մամիկոն-

---

8 Համա. П. Адонц, Марзбан Васак перед судом историков, СПб, 1904, стр. 0126.

9 Ղազար Փարպեցի, էջ 158—159։

10 Եղիշե, էջ 99։

11 Ղազար Փարպեցի, էջ 144։

յանին։ Վերջինս լսածին հաղորդակից է դարձնում Տաճատ Ռշտունուն և Վահրիմ Անձևացուն, որոնք իրենց զորագնդերով փութապես գալով Վարդանի մոտ, նրա դրդմամբ 1200 հոգուց բաղկացած զորքով անցնում են Այրարատ և հանկարծակի հարձակվելով Վնդոյի ու Շավասպի բանակի վրա, հաղթում են նրանց։ Վարդանն իր ձեռքով սպանում է Շավասպին[12]։ Բայց Թովմա Արծրունին, ինչպես պետք էր սպասել, իր տոհմի արժանապատվությունը բարձր պահելու միտումով՝ ի զուգակշիռ Վարդան Մամիկոնյանի, Շավասպի կողքին բերում է հայրենանվեր Վահան Արծրունուն, որին, իբր երկիրը խաղաղեցնելուց հետո, հայ նախարարները մտադիր էին բազմեցնել հայոց գահին, բայց համաձայնության չգալով, ի վերջո որոշում են թագավորեցնել Վարդան Մամիկոնյանին։ Վահան Արծրունին հնազանդվում է նախարարների որոշմանը և Վարդանի գլխավորությամբ, նրա հետ կողք-կողքի մարտնչելով՝ նահատակվում[13]։ Վահան Արծրունու մասին, բացի Թովմա Արծրունուց, ոչ ոք տեղեկություն չի տալիս։ Որտեղի՞ց է պատմիչը քաղել իր տվյալները։ Թովմա Արծրունին գրում է, որ օգտվել է իրենից առաջ ապրած հեղինակներից (Աբրահամ Խոստովանող և ուրիշներ)՝ և որ իբր Եղիշեն նախապես իր երկում գրած ունեցել է Վահան Արծրունու մասին։ Բայց Հայաստանում նեստորականություն քարոզող Բարծումա եպիսկոպոսը (435—489), որ հալածվում էր հայ նախարարներից[14] և հատկապես Ներշապուհ Արծրունուց, համակվում է վրեժով և Մոկքում գտնվող Եղիշե պատմիչից վերցնում է նրա երկասիրությունն ու միջից դուրս գցում Արծրունիների, մասնավորաբար Վահանի մասին եղածը։ Եղիշեի վերահաս մահը, ըստ Թովմա Արծրունու, հնարավորություն չի տալիս վերականգնելու նրա պատմության խարդախված մասերը։ Հետազոտողների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ Վահան Արծրունին հնարածո անուն է[15]։ Իրոք, եթե Վահան Արծրունին պատմական անձնավորություն լիներ, պատմիչները չէին կարող նման նշանավոր անձնավորության չհիշատակել։ Ընդունենք, թե Եղիշեի երկից Բարծումա դուրս է գցել Վահանի մասին հատվածը։ Բայց ինչո՞ւ Փարպեցին ոչ մի տեղ չի հիշատակում Վահանին։ Բարծումա կարող էր ոչընչացնել Եղիշեի ողջ երկը և ոչ թե միայն Արծրունիներին վերաբերող մասերը (թեև իրականում Եղիշեի մոտ բավականաչափ տվյալներ կան Արծրունիների մասին)։ Ըստ Թովմայի, Բարծումային հալածում էր ոչ թե Վահան Արծրունին, այլ Ներշապուհ Արծրունին, բայց վերջինիս Եղիշեն հիշատակում է հինգ անգամ և այն էլ դրականապես։ Կասկածելի է նաև, որ Եղիշեն իր պատմությունը վստահեր պարսից հովանավորությունը վայելող Բարծումային, առանց այն առաջին հերթին իր պատվիրատուին՝ Դավիթ Մամիկոնյան երեցին ուղարկելու։

---

12 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 135—137, Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 59—60։

13 Նույն տեղում, էջ 138—148։

14 Հմմտ. J. Labourt, Le Christianisme dans l'Empire Perse sous la dynastie Sassanide (224—632), Paris, 1904, p. 136.

15 Ե. Դուրյան, Ուսումնասիրություններ և քննադատություններ, Երևան, 1935, էջ 37—46, Վ. Հացունի, Խորհրդածութիւնք Եղիշեի պատմութեան վերա, Վենետիկ, 1896, էջ 159—170 և 195—214, Բ. Կյուլեսերյան, Եղիշե, Քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 117, 125—133, Եղիշե, Վարդանանց պատմությունը (Խորմ., առաջաբանը և ծանոթութ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1946, ներածական (էջ 12—14), Ա. Մալխասյանց, Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961, էջ 212—213։

Թովմա Արծրունու մոտ կեղծված են նաև ուրիշ անուններ (Քրիստափոր կաթողիկոսը ժամանակակից է համարվում՝ Բարծումային, Մշկանը և Վնդոն հանդես են բերվում որպես մարզպաններ, Հաղկերտ Բ-ը շփոթվում է Պերոզի հետ և այլն)։

Որոշ հետազոտողներ Վահան Արծրունուն համարում են պատմական անձնավորություն[16]։

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Եղիշեի արտահայտությամբ «ի նախարարսն հայոց անկանէր թագաւորութիւնն»։ Հայոց նույն նախարարների մեջքով էր նաև, որ վերացավ Արշակունյաց թագավորությունը։ Անշուշտ դրա պատճառները բխում են նախարարական կարգի բուն էությունից, որին ներհատուկ էին ցրվածությունը, կոտորակվածությունը և դրա հետ դիրկընդխառն դրսևորվող ավատիշխանների տարանջատ հակումների տարերը։ Այսօրինակ հակումներին մեծապես տուրք էին տալիս Արծրունիները։ Վահանի առաստղը դրա ապացույցներից է։

Ինչո՞վ բացատրել Վահան Արծրունու մասին Թովմա Արծրունու արած մատենագրական կեղծիքը։ Դա ամենից առաջ պետք է բացատրել պատմիչի ապրած դարաշրջանի քաղաքական պահանջներով։ Հայտնի է, որ Թովմա Արծրունին իր պատմությունը գրել է Արծրունի իշխանների (Դերենիկի, ապա Գագիկի) հրամանով[17]։ Անշուշտ, որպես տոհմասեր պատմիչ, նա այն գրել է կողմնակալությամբ։ Մատենագիրը միտվել է հնարածո փաստերով պատմական և բարոյական արդարացում տալու IX—X դարերում Արծրունիների կենտրոնախույս նկրտումներին, Հայոց թագավոր դառնալու նրանց հավակնությանը։ Ուստի Թովմա Արծրունին հարազատ տոհմից թագավորացուներ է հնարել հայոց պատմության բախտորոշ ու հեռավոր անցյալում։ Վահանի առաստղի նպատակն էր Արծրունիների դրվատումը[18]։ Այնուհանդերձ պատմիչը Վահան Արծրունուն ստորադասել է Վարդան Մամիկոնյանին։ Սա պետք է բացատրել Թովմա Արծրունու եկեղեցական աշխարհընկալմամբ, որի համար եկեղեցու շահերը վեր են ամեն ինչից։ Ուստի, հավատի համար նահատակված, եկեղեցու կողմից սրբացված Վարդանին պատմիչը նախամեծար է համարում Վահանից։

Մյուս կողմից, նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ պատմիչի ապրած դարաշրջանում Մամիկոնյան տոհմը դուրս էր վանվել քաղաքական ասպարեզից և, հետևաբար, անցյալը չէր կարող շահարկվել այդ տոհմի կողմից։ Քաղաքական ասպարեզում եղող Բագրատունիները, որ մի ժամանակ Մամիկոնյանների երդվյալ մրցակիցներն էին, այժմ բախվում էին Արծրունի-

---

16 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 73—76, Հ. Հարությունյան, Վարդանանց պատերազմը, Երևան, 1946, էջ 143—144 և այլն։ Վ. Նալբանդյանի կարծիքով, Ավարայրի ճակատամարտի նախօրյակին գրված է եղել հայոց թագավորության վերականգնման հարցը։ Ի շարս այլ կովանների, Վ. Նալբանդյանը վկայաբերում է նաև Վահան Արծրունու մասին Թովմա Արծրունու հաղորդումը (տե՛ս Վ. Նալբանդյան, 451 թ. ապատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը, ԳԱ «Տեղեկագիր», № 12, 1953)։ Նույն կարծիքին է նաև Ա. Հովհաննիսյանը (տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 97—99)։

17 Թովմա Արծրունի, էջ 22, 134։

18 Հմմտ. M. Brosset, Notice sur l'histoirien Armenien Thoma Ardzrouni X-es. (Melanges Asiatiques. tome IV, St-Petersbourg, 1862, p. 698).

ների հետ։ Արծրունի պատմիչը անցյալը շահարկում է յուրովի։ Արծրունյաց երբեմնի ազգականներ Մամիկոնյաններին հիշատակելը սատարելու էր Բագրատունիների դեմ Արծրունիների մղած մրցապայքարին։

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Թովմա Արծրունին մեծապես ազդվել է Եղիշեից։ Դիտելի է, որ Եղիշեին հետագա մատենագիրներից առաջինը հիշում է Թովմա Արծրունին, նրան համարելով իր ուսուցիչը։ Եղիշեն Ավարայրի դաշտ եկած նախարարների մեջ առաջին տեղում հիշատակում է Ներշապուհ Արծրունուն։ Իսկ Ավարայրի նահատակների մասին գրելիս պատմիչը հիշատակում է նաև՝ «յարքունի տանէն եւ ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր յալոց նախարարաց տանէն...»[19], Արծրունիներին գնելով Արշակունիներից անմիջապես հետո, մի պարագա, որը չէր կարող չգրավել Թովմա Արծրունու ուշադրությունը։ Մանավանդ, որ Ավարայրի ճակատամարտում Արծրունիների գործոն մասնակցությունն աներկբա էր։ Թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին վկայում են, որ Ավարայրի մարտում հայոց զորասյուններից մեկը գլխավորում էր Ներշապուհ Արծրունին, նիզակակից ունենալով Մոկաց իշխանին (Եղիշեի մոտ՝ առաջին, Փարպեցու մոտ՝ կենտրոնի գունդը)։ Նույն պատմիչների հաղորդածից երևում է, որ Ավարայրի մարտադաշտ հասած Արծրունի նախարարներ Ներշապուհը և Ապրսամը չեն զոհվել մարտում, բայց, ինչպես տեսանք, Եղիշեն Ավարայրում զոհվածների թվում հիշում է նաև Արծրունիներին։ Անհիմն է այն պնդումը, թե Արծրունիների գլխավորած զորագունդը կամ չի մասնակցել Ավարայրի ճակատամարտին, կամ էլ փախուստի է դիմել մարտն սկսվելուց հետո[20]։ Ճիշտ է, Ավարայրում հայոց զորքի մի մասը հակված չէր կռվելու թշնամու դեմ և ակամայից էր մարտադաշտ եկել[21], ուստի մարտի թեժ պահին կորցնելով հաղթանակի նկատմամբ հավատը, լքեց մարտադաշտը, ապավինելով մոտակա լեռներին ու կիրճերին[22]։ Բայց սա հիմք չի տալիս պնդելու, թե Ավարայրի ճակատամարտից առաջ Արծրունիները թողել են մարտադաշտը։ Որ այդպես չի եղել, երևում է ճակատամարտից հետո Արծրունյաց հանդեպ պարսից արքունիքի ունեցած բացասական մոտեցումից։ Կարող է աչքի զարնվել նաև այն հանգամանքը, որ Արծրունի հոգևորականներ հականեն չեն հիշատակվում Ավարայրի մարտին մասնակցողների մեջ։ Սա ևս հիմք չի կարող լինել Արծրունիներին դատապարտելու համար, քանի որ ընդհանրապես (բացառյալ Հովսեփ կաթողիկոսից և Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսից) Արտաշատի ժողովին մասնակցած հոգևորականներից ոչ ոք չի հիշվում Ավարայրի ճակատամարտի մասնակիցների շարքերում, թեև նրանց մասնակցությունն աներկբա է, ինչի մասին վկայում են թե՛ Եղիշեն, թե՛ Փարպեցին։ Ուշագրավ է նաև այն, որ ապստամբությունից հետո Արտաշատի ժողովին մասնակցած 18 եպիսկոպոսներից միայն չորսին կապանքների մեջ դրած տարան Պարսկաստան, որտեղ և նրանք նահատակվեցին (Հովսեփ կաթողիկոս, Մուշեղ Արծրունի, Սահակ Ռշտունի և Թաթիկ Բասենայի)։ Ինչպես տեսնում ենք, չորսից մեկն Արծրունի էր։ Ասյար աշխարհում նահատակված նախարարների մեջ

19 Եղիշե, էջ 120։

20 Տե՛ս Հ. Ք. Արմեն, Մարզպանը և սպարապետը, Լոս Անջելոս, 1952, էջ 243։

21 Ղազար Փարպեցի, էջ 153։ Հմմտ. Ա. Մ. Դարադաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Դ, Թիֆլիս, 1895, էջ 142։

22 С. Т. Еремян, Народно-освободительная война армян против персов в 450—451 гг. («ВДИ», № 4, 1951, стр. 58).

են՝ Ներշապուհ, Մեհրուժան, Շավասպ, Շնգին, Պարգև և Տաճատ Արծրունիներին։ Վասպուրականի ժողովուրդը (Հայոց ձոր, Նախիջևանի գավառ և այլն) սիրով պահպանեց Ավարայրի նահատակների հիշատակը[24]։

УЧАСТИЕ АРЦРУНИДОВ В ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЕ 450—451 ГГ.

В. М. ВАРДАНЯН

Резюме

В освободительном движении 450—451 гг. нахарарский род Арцрунидов играл выдающуюся роль после Мамиконянов, и активно содействовал Вардану Мамиконяну. Участие Арцрунидов в освободительной войне было обусловлено тем, что они соперничали с Сюникскими и Багратидскими князьями, являвшимися противниками восстания. Кроме этого, Арцруниды имели влиятельных представителей среди духовенства. Цель Арцрунидов, как и остальных нахараров, состояла в том, чтобы сохранить имевшуюся внутреннюю самостоятельность, нахарарский строй, христианскую религию. Неправдоподобно сообщение Товмы Арцруни о Ваане Арцруни, которого якобы нахарары хотели провозгласить царем Армении. Арцруниды активно участвовали во всех этапах движения: в Арташатском соборе, в Аварайрском сражении и т. д. За это они были наказаны Сасанидским двором.

---

23 Եղիշե, էջ 193, Ղազար Փարպեցի, էջ 185։

24 Տե՛ս Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 168, 248 և այլն։